ՄԱՅՐ ԱԹՈՌ

Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ վիրաւոր զինուորների հոգեւոր միխիթարութեան համար Մայր Աթոռի Տպարանի վարչութիւնը ուղարկել է Աւետարան (չորս աւետարանները միասին կազմած) հետեւեալ տեղերը, 1) Թիֆլիս, թեմի առաջնորդին 200 օրինակ, 2) Երեւան, փոխ-թեմակալին՝ 100 օր. 3) Բագուի Մարդասիրական Ընկերութեան 100 օր. 4) Պետրոգրադի Հայոց եկեղեց. խորհրդին 200 օր. 5) Մոսկուայի Հայոց եկեղ. խորհրդին 100 օր. 6) Նոր-Նախիջեւանի փոխանորդին 100 օր. 7) Աղէքսանդրապոլի փոխանորդին 100 օր.։

Ծխական կանոնադրութիւն.

1907 թ. Մկրտիչ Կաթուղիկոսի օրօք հրատարակուած ծխական կանոնադրութիւնը, որոշ թերութիւնների և լրացումների պատճառով, վաղուց կարիք կար վերամշակութեան ենթարկելու և տալու Ռուսահայոց եկեղեցիների ծխական համայքներին համեմատաբար աւելի լրիւ ծխական կանոնադրութիւն։ Ազգիս Վեհափառ Հայրապետն, ի նկատի առնելով այդ կարիքն, Իւր 1913 թ. 26 սեպ. թ. 1421 կոնդակով նշանակել էր մի Յանձնաժողով նախագահութեամբ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսի և անդամակցութեամբ Տ. Կարապետ, Տ. Բաղրատ, Տ. Մատթէոս եպիսկոպոսների, Տ. Բաբգէն՝ որ և քարտուղար Յանձնաժողովի ու Տ. Ներսէս վարդապետների, որոնց և պատուիրել էր վերաքննութեան ենթարկել 1907 թ. Հայաստանեայց եկեղեցու ծխական կանոնադրութիւնը՝ ի նկատի առնելով այդ կանոնադրութեան շուրջն եղած բոլոր նիւթերը, և ապա վերամշակած ծխակ. կանոնադրութիւնը ներկայացնել ի տնօրէնութիւն Նորին Սրբութեան։

Նախ քան ս. Էջմիածնում ծխակ. կանոնադրութիւնը վերամշակութեան ենթարկելը, 1907 թ. ծխական կանոնադրութիւնը և նորա շուրջն եղած զանազան ժամանակներում Վեհափառ Հայրապետի Դիւանում թեմերից ստացուած դիտողութիւնները միասին ուղարկուել են թեմական առաջնորդներին, որ իւրաքանչիւրը դիտակ անձերից բաղկացած մանաժողով կազմի և վերաքննութեան ենթարկի 1907 թ. ծխական կանոնադրութիւնը և ապա ուղարկեն ի տնօրէնութիւն Վեհափառ Կաթուղիկոսի։ Բոլոր թեմերից իւր ժամանակին ստացուել են վերաքննութեան ենթարկած ծխական կանոնադրութիւնը որոշ դիտողութիւններով հանդերձ։

Ծխական կանոնադրութիւնը վերամշակող ս. Էջմիածնի վերոյիշեալ Յանձնաժողովը մի շարք ժողովներ ունենալով և ի նկատի առնելով թեմերից ստացուած դիտողութիւնները, պետական գործող օրէնքները, Տ. Փոխարքայի ժամանակաւոր կանոնները, այլ և վերջերս հրատարակած Ռուսաց եկեղեցու ծխական կանոնադրութեան նախագիծը, ամբողջապէս վերաքննութեան ենթարկեց 1907 թ. ծխական կանոնադրութիւնը և բոլորովին նոր վերամշակուած ձևով ներկայացրեց այս անցեալ ամառ Վեհափառ Կաթուղիկոսին ի բարեհաճ տնօրէնութիւն։ Վեհափառ Հայրապետի կողմից հաւանութիւն գտնելով՝ վերամշակած ծխական կանոնադրութիւնն արդէն յանձնուած է տպագրութեան Մ. Աթոռի տպարանում, որը լոյս տեսնելուց յետոյ կուղարկուի թեմերը մեր եկեղեցական ներքին ծխական գործերը ղեկավարելու այդ նոր ծխական կանոնադրութեամբ։ Այդ նոր վերամշակած ծխ. կանոնադրութեան փոփոխութեանց մասին կբիսուենք հետևեալ անգամ։

Բ. վ. Ա.